




«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՎԱՐՉԱ—ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ» ԱՌԻԹՈՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՆԱՄԱԿՆԵՐ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԵՎ

Թ. 517

8 Հոկտեմբեր 1984 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Ա ն թ ի լ ի ա ս

Սիրեցեալ Եղբայր,

Շահեկանութեամբ կարդացինք Ձեր 1 Հոկտեմբեր 1984 թուակիր նա-
մակը:

Անդրադառնալով Ձեր արծարծած հարցերուն, այսու կը յայտնենք Ձեր
մտածումները.

Մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան ամենաալիքական անհրաժեշտութիւ-
նը մշակումն է «Հայ Եկեղեցւոյ վարչա-կազմակերպչական կանոնագրու-
թեան», ուր ընդհանուր գծերով և հնարաւոր չափով յստակ ճշտուած ըլլան
մեր Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու, Եպիսկոպոսական Ժողովի
(մեծ Սինոդ), Գերագոյն Հոգևոր Խորհուրդի (փոքր Սինոդ), թեմական
առաջնորդութիւններու և այլ միաւորներու փոխարարչութիւններն ու իրա-
ւասութեանց և գործունէութեան սահմանները:

Վաթսուն տարիներէ ի վեր պատմութեան գիրկը անցած են Արևելահա-
յաստանի «Պօլսթէնիան» և Արևմտահայաստանի «Ազգային Սահմանադրու-
թիւն»-ը և ցարդ վանոնք փոխարինող վարչա-կազմակերպչական կանոնա-
դրութիւն մը չունինք համապատասխան պատճառներ մեր եկեղեցական կապ-

մակերայության կառույցին և կեանքին, հիմնական սկզբունքներու և դրութիւններու բանաձևումով, որոնցով արտայայտուէր նաև միութիւնը և մէկութիւնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին:

Մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան հիմնաքարը նման կանոնադրութեան մը մշակումն ու կեանքի կոչելն է: Եւ նոր չէ Մեր այս մտահոգութիւնը: Մեր գահակալութեան առաջին իսկ տարիներուն դրինք այս հարցը սեղանի վրայ և քանի մը անգամներ մեր Եպիսկոպոսաց ժողովները փորձեր կատարեցին նման կանոնադրութեան նախագիծեր պատրաստելու: Վերջին երեք տարիներուն շարունակուեցան այս ճիգերը: Այս տարի Սեպտեմբերին Ս. Էջմիածնի մէջ, Մեր նշանակած նորակազմ Յանձնաժողովը, կարևոր աշխատանք կատարեց և կարողացաւ կազմել եկեղեցական կանոնադրութեան նախագիծի մը կմախքը, ամփոփուած 84 յօդուածներու մէջ: Յանձնաժողովին մաս կազմեցին՝ Տ. Շնորհք սրբազան Պատրիարք Կ. Պոլսոյ, Տ. Տիրան արքեպ. Ներսոյեան, Տ. Սիոն արքեպ. Մանուկեան, Տ. Ներսէս եպս. Պոպապալեան, և Տ. Մեսրոպ ծայր. վարդապետ Գրիգորեան:

Յանձնաժողովը իր լաջորդ նիստերը պիտի գումարէ յառաջիկայ զարնան, յոյս ունենալով որ պիտի կարողանայ Մեզի ներկայացնել գոնէ բաւարար չափով ընդունելի նախագիծ մը: Եթէ այդ առաջադրանքը լաջողի Մենք այդ նախագիծը պիտի յղենք Չերդ Սրբութեան, ակնկալելով որ վայն քննարկէք և յառաջիկայ տարի աշնան Չեր Աթոռի ներկայացուցիչները մեր կողմէ հրաւիրուին Մայր Աթոռ, Յանձնաժողովին հետ միասին աշխատելու, նպատակ ունենալով մշակել կանոնադրութեան մը վերջնական նախագիծը, որ ընդունելի դառնայ բոլորիս համար:

Այա, Մենք կը խորհինք, այդ նախագիծը առաքել մեր Եկեղեցւոյ բոլոր Աթոռներուն և բոլոր եպիսկոպոսներուն յուսումնասիրութիւն: Որով լետով, հաւանաբար 1986 թուականին, հնարաւոր կը դառնայ գումարումը մեր Եկեղեցւոյ Եպիսկոպոսական Ժողովին, որ կը կոչուի քննարկել ներկայացուած նախագիծը ու տալ համապատասխան հաւանութիւն, ի յարկին որոշ փոփոխութիւններով: Եպիսկոպոսաց այդ Ժողովին բնականաբար պիտի փափաքինք հրաւիրել նաև Չեր Աթոռի եպիսկոպոսները Չեր միջոցաւ: Եպիսկոպոսական Ժողովի բովէն անցնելէ լետով է որ Կաթողիկոսական վճիռով կանոնադրութիւնը կը ստանայ կանոնական հաստատում: Չեր Աթոռի և ձեր թեմերու համար այդ հաստատումը կրնայ տալ Չերդ Սրբութիւնը:

Չուգահեռ այս աշխատանքներուն, մենք օգտակար կը գտնենք որ Չեր ներկայացուցիչներու հետ հանդիպումներով օրակարգի վրայ դրոյին նաև այլ բարեկարգական հարցեր, որոնք ալժմէական պիտի նկատուին և առաւել պիտի արտայայտուի մեր Եկեղեցւոյ ներքին միութիւնը և միասնական գործակցութիւնը:

Իրապէս, մեր առջև կուտակուած են բազում տեսակի հարցեր, որոնք կը սպասեն քննարկման և լուծման: Առանց աճապարելու, բայց և առանց ձգձգելու, պարտինք գործի անցնիլ և քալ առ քալ յառաջ ընթանալ, փոխադարձ սիրով, համբերութեամբ ու լաւատեսութեամբ և մանաւանդ պայծառ գիտակցութեամբ մեր Եկեղեցւոյ ու ժողովուրդի գերագոյն և մնայուն շահերուն:

Չեր ափերէն միշտ բարի յուրեր սպասող և տեսապէս աղօթող ձեր երկրի խաղաղութեան համար, մնամք

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱՉԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

*
* *

Թիւ 345:84

Անթիլիաս, 29 Հոկտեմբեր, 1984

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՓԱՌ S. S. ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Եղբայր,

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր 8 Հոկտեմբեր, 1984 թուակիր եւ 517 թուահամար նամակը, որուն մէջ անդրադարձած եիք մեր եկեղեցւոյ ներկայի եւ ապագայի հետ կապուած կարեւոր եւ էական հարցերու:

Հարկ էր որ Ձեր նամակի բովանդակութեան մապին ունենալինք պատշաճ խորհրդակցութիւններ մեր Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովին հետ, լայնօրէն անդրադառնալու համար այնտեղ նշւած էական հարցերուն եւ Ձեզի փոխանցելու մեր Ս. Աթոռի մտածումներն ու կեցումաձքը մասնաւորաբար 4-րդ կէտին նկատմամբ, ուր դրուած է «հայ եկեղեցւոյ վարչա-կազմակերպչական կանոնագրութեան» խնդիրը, որ ինքնին բարդ հարց մըն է եւ ամենաւերջ նկատողութեան արժանի մանաւանդ մեր եկեղեցւոյ գոյալիճակի ներկայ դրութեան պայմաններուն տակ, որոնք այնքան աղապան են իրարմէ:

Տրուած ըլլալով, սակայն, որ Արեւմտեան Գերմանիոյ Աւետարանական եկեղեցիներու Իլաւերով եւ Էկիմենիկ նկարագրով իննօրեայ այցելութիւն մը պիտի տանք վաղուընէ սկսեալ, ի Գերմանիա եւ ապա ուղղակի պիտի մեկնինք Լոս-Անճելոս, Մոնթեպելլոյի Ս. Խաչ նորակառոյց եկեղեցւոյ օծման համար, եւ այսպէս մէկ ամսուան բացակայութիւն մը պիտի ունենանք Կիլիկեան Ս. Աթոռէս ու կարելիութիւնը չունինք նման խորհրդակցութիւններ ունենալու անմիջապէս, եւ՝ տրուած ըլլալով որ ուզեցինք անմիջապէս յայտնել Ձեզի Ձեր նամակին ստացումը եւ Մեր առաջին տպաւորութիւնը, ուստի, այս նամակը կ'ուղղենք Ձեզի եղբայրական նոյն սրտակցութեամբ, վոր կը զգանք Ձեր նկատմամբ:

Բնականօրէն քննելի կարեւոր հարցերէն մէկն է Հայց. եկեղեցւոյ ընդհանուր կանոնագրութեան մը հարցը, Հայց. եկեղեցւոյ բարեկարգութեան շրջագծին մէջ: Եւ ճիշդ այդ կարեւորութեան համար, Փարիզի Մեր հանդիպումին եւ անկէ ետք երկիցս յայտնեցինք Ձեզի Մեր փափաքն ու հիմնական տեսակէտը, թէ՛ բոլոր հարցերու ճշդումը, քննութիւնը եւ անոնց մասին կարելի եպրակացութեանց յանգումը պետք է որ տեղի ունենան Հայց. եկեղեցւոյ ամբողջութեան կողմէ, բոլոր նուիրապետական Աթոռներու մասնակցութեամբը:

Կը նկատենք որ մեր եկեղեցիին եւ ազգին համար հոգեւոր եւ ազգային գերագոյն շահերուն հետ կապուած կանոնագրութեան մը այնքան նուրբ հարցը արդէն փակ սկսած է քննարկուիլ եւ նոյնիսկ սկզբնական նախագծումներու ալ յանգիլ, 84 յօդուածներէ բաղկացած կանոնագրութեան նախագծով մը, որ պատրաստուած է Ձեր կողմէ նշանակուած Յանձնաժողովով մը, որուն մէջ մեր Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռը ոչ մէկ ներկայացուցիչ ունի: Ձեր նամակին մէջ կարեւոր հաստատում մը կ'ընէք, ըստ որուն «վաթսուն տարիներէ ի վեր պատմութեան գիրկը անցած են՝ Արեւելահայաստանի «Պօլօ-ժէնիան» եւ Արեւմտահայաստանի «Ազգային Սահմանադրութիւն»ը: Բայց այդ ձեւի պատկերացում մը՝ համապատասխան չէ ներկայիս գոյութիւն ունեցող իրողական եւ իրաւական տուեալներուն: Արդարեւ, Ազգային Սահ-

մանադրությունը պատմության չէ անցած, որովհետեւ նախ ի պօրու է, որպես օրենք, պետական ճանաչումով, կարգ մը երկիրներու մէջ եւ ըլլալ մեր Կաթողիկոսութեան թեմերուն մէջ, ըլլալ նոյնիսկ Ս. Էջմիածնի թեմերէն ունեց մէջ ան հիմքն է մեր եկեղեցւոյ ներկայ վարչական դրութեան եւ ազգային-եկեղեցական կեանքին: Կարգ մը երկիրներու մէջ մեր կարեւոր հայ գաղութներու ազգային-եկեղեցական կեանքի յատուկ եւ պետականօրէն ճանչցուած համայնքային իրաւունքներու օրինական հիմքն է ան եւ ոեւէ խախտում կամ անոր հարցականի տակ դրուիլը եւ կամ անոր մէջ ոեւէ հիմնական փոփոխութիւն յառաջ բերելը անպայման լուրջ վտանգի առջեւ կը դնէ մեր ժողովուրդի ազգային-եկեղեցական համայնքային իրաւունքները, որոնք այնքան կենսական եւ անմիջական նշանակութիւն ունին մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի ազգապահպանման նուիրական եւ հրամայական պարտաւորութեան եւ առաքելութեան տեսակէտէն:

Կարելի է դեռ երկարօրէն անդրադառնալ այն հետեւանքներուն, որոնք կրնան ծանր վնաս բերել մեր ժողովուրդի կարեւոր կարգ մը համայնքներուն, եթէ այդպիսի մտածումով առաջնորդուած՝ տեղի ունենալ նոր կանոնադրութեան մը մշակումը, ինչ որ կրնայ յառաջ բերել նոր եւ դժուար յաղթահարելի կացութիւններ արտասահմանեան հայ կեանքին մէջ:

Այս եւ նման մտահոգութիւններէ առաջնորդուած եւ Հայց. եկեղեցւոյ միութիւնը ամուր պահելու նախանձախնդրութենէն մղուած՝ Մենք յստակօրէն ու բազմիցս յայտնեցինք Չերդ Սրբութեան Մեր փափաքը եւ դիրքը, որով ուզեցինք որ Հայց. եկեղեցւոյ նուիրապետական բոլոր Աթոռներու մասնակցութեամբ ճշդուին բարեկարգութեան հարցերը եւ միասնօրէն քննուին, որպէսզի կարելի ըլլայ միասնական ձեւով ընդունելի եզրակացութիւններու յանգիլ: Եւ այս ուղղութեամբ Մեր նախորդ, I Հոկտեմբեր թուակիր եւ 307:84 թուահամար նամակով առաջարկեցինք որ խորհրդակցութիւն մը տեղի ունենալ նուիրապետական Աթոռներու Գահակալներուն միջեւ, որպէսզի միասնօրէն յառաջ տարուին Հայց. եկեղեցւոյ բարեկարգութեան հարցին ծրագրումը եւ քննութիւնը: Տրուած ըլլալով հարցին խիստ այժմեականութիւնը, դարձեալ կը կրկնենք Մեր փափաքն ու առաջարկը:

Մենք համոզուած ենք որ բնական ձեւը պիտի ըլլայ այս գործընթացը (procedure) երբ մանաւանդ մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի ներկային ընդհանրական շահերը կը պահանջեն այդ միասնականութիւնը: Եղբայրօրէն կը փափաքինք, որ բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ նկատի ունենաք Մեր այս մօտեցումը, որով սկիզբէն իսկ կարելի կը դառնայ առաջը առնել հետագայի շփոթութիւններու, թիրիմացութիւններու եւ դժուարութիւններու:

Յարաջիկայ Դեկտեմբերին, Ազգ. Կոր. Վարչութիւնս խառն Ժողովին հետ խորհրդակցելէ ետք, աւելի մանրամասնեալ եւ խոր քննութեամբ կը պատասխանենք Չեր նամակին: Եղբայրական սիրոյ պարտք համարեցինք այս նամակով կրկնելու Մեր փափաքն ու առաջարկը: Վստահ ենք, սիրելի Վեհափառ եղբայր, որ միասնականութեան նոյն նախանձախնդրութեամբը առաջնորդուած՝ պիտի նկատի ունենաք Մեր այս նամակին բովանդակութիւնը եւ պիտի ընէք Չեր լաւագոյնը որպէսզի մեր դարաւոր սուրբ եկեղեցին առաւել եւս զօրանայ եւ բարգաւաճի միութեամբ, միասնութեամբ եւ գործակցութեան դրական արտայայտութիւններով:

Մնամք եղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ

ԱՂԹԱԿԻՅ

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՅ

Թ. 33

21 Յունուար 85 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ա ն թ ի լ ի ա ս

Սիրեցեալ Եղբայր,

Կարևորութեամբ կարդացի Ձեր 29 Հոկտեմբեր 1984 թուակիր նամակը: Կը բաժնեմ Ձեր մտահոգութիւնները մեր Եկեղեցւոյ կանոնադրութեան մշակման և կուսակրօնութեան դրութեան վերաբերեալ: Սակայն անոնք այժմեական հարցեր են, որոնք կը սպասեն լուծման: Ես գոհ եմ, որ կը գրեք թէ այդ հարցերը հանգամանօրէն պիտի քննարկուին Ձեր Աթոռէն ներս:

Սոյն գրով մտերմաբար Ձեզի կ'ուզեմ ներկայացնել իմ մտածումները այս երկու կենսական հարցերու մասին:

ա. Մեր Եկեղեցին իր ամբողջական կառոյցով կանոնադրութեամբ մը օժտելու անհրաժեշտութիւնը, զիս յուզած է առաջին իսկ օրէն, երբ իմ տկար ուսերուն վրայ ծանրացան Հայոց Հայրապետութեան պարտականութիւնները:

Իմ առաջնահերթ մտահոգութիւններէն մին եղաւ մշակումը նման մէկ կանոնադրութեան, որովհետեւ չէի կրնար ըմբռնել թէ մեր մայր Եկեղեցիի նման պատկառելի անցեալ ունեցող նուիրական հաստատութիւն մը կրնայ շարունակել ապրիլ ու գործել առանց ունենալու կանոնադրութիւն մը, իբրև կանոնական ու վարչա-կապակերպչական ուղեցոյց:

Այստեղ ճշդում մը. խօսքը չի վերաբերիր կանոնագրքի մը կազմութեան (Droit canonique), այլ վարչա-կապակերպչական կանոնադրութեան մը, հիմնուած մեր Եկեղեցւոյ նուիրապետական աւանդական կարգ ու կանոնին վրայ: Ինչպէս ծանօթ է Ձեզի, մեր ունեցած հին կանոնագիրքը զոր լոյս ընծայեց Երևանի Մատենադարանը, կանոններու հաւաքածոյ մըն է, իր ամբողջութեամբ ոչ կիրառելի այսօր: Այդ այլ հարց է:

Մեզի համար այժմ անհրաժեշտը, ներկայ պայմաններու մէջ ուղեցոյց հանդիսացող կանոնադրութիւն մը ունենալն է, որ ներկայացնէ մեր օրերու հայ Եկեղեցւոյ կառոյցը իր նուիրապետական, թեմական, համախառն միաւորներով, անոնց փոխարաբերութիւնները և գործունէութեան ձևերը ճշդող, հիմնուած մեր եկեղեցական աւանդութեանց ու ժողովրդավարական և ժողովական դեկավարման սկզբունքներու վրայ:

Վստահ եմ թէ չկայ այսօր քիչ շատ կապակերպուած Եկեղեցի մը որ նման կանոնադրութիւն չունենայ: Ինձ քաջ ծանօթ է ռումէն օրոտոռքա Եկեղեցւոյ կանոնադրութիւնը որ լաւ մշակուած ու խմբագրուած վարչա-կապակերպչական օրէնագիրք մըն է, յստակ, ճշգրիտ և ամբողջական, ժամացոյցի պէս աշխատող: Կը կոչուի՝ „Statut pour l'organisation et le fonctionnement de l'Eglise Orthodoxe Roumaine“:

Տեղեակ ըլլալով վերոյիշեալ իրողութիւններուն, իբրև Կաթողիկոս ես չկրցայ հաշտուիլ և հիմա ալ հաշտուած չեմ, որ Հայ Եկեղեցին կրնայ ապրիլ ու գոյատևել առանց իր տունին մէջ կարգ ու կանոն, հաստատելու: Այս տեսակէտէն մեր Եկեղեցին իր ամբողջին մէջ, վատառողջ վիճակի մէջ է, ներքնապէս անկարգ, լաճախ զոհ պատահականութեանց կամ կամայականութեանց, չըսելու համար առեփն:

բ. Այս անբնականոն իրավիճակը ստեղծուած է առաջին, համացարկա-



ին պատերազմեն յետոյ, երբ ցարական և օսմանեան կայսրութեանց փուլումով, իրաւապէս և գործնապէս գոյութենէ դադրեցան «Բոյոժենիա» և «Ալզային Սահմանադրութիւն» կոչուած կանոնադրութիւնները: Առաջինը՝ «Բոյոժենիան» ռուսերէն կը նշանակէ՝ «վիճակ, կացութիւն» որ ֆրանսերէն կարելի է թարգմանել «Statut» բառով, իսկ երկրորդը՝ զոր մենք հայերս կը սիրենք կոչել «Ալզային Սահմանադրութիւն», իրականին մէջ կը կոչուի «Հայկական Պատրիարքութեան կանոնագրութիւն» (Ermeni patrikligi* nizamatı), երկուքն ալ տիրապետող կայսրութեանց ողորմածութեամբ շնորհուած, երկուքն ալ մաս կազմելով ցարական ու օսմանեան կայսրութեանց օրէնսդրական մարմինն: Այդ տեղական կանոնագրութիւնները թէ այստեղ և թէ Թուրքիոյ մէջ աւելի քան կէս դար է որ դադրած են ուժի մէջ ըլլալէ: Անոնք ուժի մէջ չեն ու չեն կրնար ըլլալ նաև այլ երկիրներու մէջ, ուր հայ եկեղեցական համայնքներ կան այսօր: Մեր թեմերէն ոչ մէկուն թեմական կանոնագրութեան մէջ յիշատակութիւնը չկայ ոչ «Բոյոժենիայի» և ոչ ալ «Ալզային Սահմանադրութեան»: Որեւէ պետութեան համար ալ, որուն իշխանութեան ներքև հայ համայնքներ կան, անընդունելի պիտի ըլլար ճանաչումը կամ յիշատակումը այդ կանոնագրութիւններուն մէկուն կամ միւսին: Օրինակի համար, ռումէն պետութեան պարագային, անըմբռնելի պիտի ըլլար նման յիշատակում թոյլատրել ռումանահայ եկեղեցական թեմական կանոնագրութեան մէջ (վաւերացուած ռումէն պետութեան կողմէ 1931-ին) որ լաւ կազմուած կանոնագրութիւն մըն է, վաւերական կանոնական և ժողովրդավարական սկզբունքներու համաձայն մինչև այսօր կիրառուող:

գ. Այնուամենայնիւ, սակայն, ոմանք կը կարծեն թէ Կ. Պոլսոյ «Հայկական Պատրիարքութեան կանոնագրութիւն»-ը որ կը կոչուի «Ալզային Սահմանադրութիւն», մեր օրերուն ալ կրնայ ի պօրու նկատուիլ հայ սփիւռքի մէջ:

Որեւէ օրէնք կամ սահմանադրութիւն կրնայ օրինաւորապէս ուժի մէջ նկատուիլ, եթէ այդ օրէնքը կամ սահմանադրութիւնը անփոփոխ կը մնայ իր ամբողջութեան մէջ և գործնապէս կը կիրառուի տուեալ երկրին մէջ: Նոյնիսկ եթէ տուեալ օրէնքին կամ սահմանադրութեան մէջ մասնակի փոփոխութիւններ ու յաւելումներ մուծուին, այլևս այդ վերափոխուածը նոր օրէնք կամ սահմանադրութիւն կը նկատուի: Օրինակ, մեր օրերուն Ֆրանսայի սահմանադրութիւնը Ե. Հանրապետութեան սահմանադրութիւնն է. նախորդները՝ Ա. Բ. Գ. և Դ. Հանրապետութեանց սահմանադրութիւնները, բնականաբար ի պօրու չեն, պատմութեան անցած են, հակառակ որ Ֆրանսայի պարագային, վերջին մօտ երկու հարիւրամեակներու շրջանին կիրառուած հինգ սահմանադրութիւնները շատ նմանութիւններ ունին և բոլորն ալ հիմնուած են առաւել կամ նուազ չափով ֆրանսական մեծ յեղափոխութեան սահմանադրական սկզբունքներուն վրայ:

Պարզ է որ «Ալզային Սահմանադրութիւն»-ը թէ իրաւապէս (de jure) և թէ գործնապէս (de facto) գոյութիւն ունենալէ դադրած է և ոչ մէկ խնայող ունի որ ան յիշատակուի մեր եկեղեցական կանոնադրութիւններուն մէջ:

դ. Մի գուցէ, սակայն, «Ալզային Սահմանադրութիւն»-ը կիրառելի համարելու ցանկութիւնը կը նշանակէ ժողովրդավարական սկզբունքի և ժողովական ղեկավարման դրութեան կիրառումը մեր եկեղեցական կեանքէն ներս: Եթէ այդպէս է, այդ պարագային հարկ է պարզապէս այդ մասին խօսիլ և ոչ թէ «Ալզային Սահմանադրութեան» կիրառման մասին: Ճշմարիտ է որ «Ալզային Սահմանադրութիւն»-ը որդեգրած էր ժողովրդավարական սկզբ-

* Որոշ իրաւաբանութիւններում «Նիզամնամէի միլլեթի էրմենիան»;

բունքը, սակայն այդ բնաւ չի նշանակեր որ «Ազգային Սահմանադրութիւն» և ժողովրդավարական սկզբունք նոյն բաներն են: Ժողովրդավարական սկզբունքը, մանաւանդ ֆրանսական լեղափոխութեան շրջանէն ի վեր շատոնց որդեգրուած է բազում պետութիւններու և կապիտալիզմի լիբերալներու կողմէ: «Ազգային Սահմանադրութեան» հայ հեղինակները ևս իրենց ժամանակին պարպապէս փորձած են Թուրքիոյ հայ եկեղեցական կեանքին մէջ որդեգրել ժողովրդավարական սկզբունքը, ապրուած ֆրանսական լեղափոխութեան գաղափարներէն: Հետևաբար՝ «Ազգային Սահմանադրութիւն»-ը կը մնայ պատմութեան անցած եկեղեցական տեղական կանոնադրութիւն մը, իսկ մեր օրերուն պէտք է նոր կանոնադրութեամբ մը օժտուի մեր Եկեղեցւոյ կառոյցը, որդեգրելով, այո, ժողովրդավարական և ժողովական ղեկավարման սկզբունքները: Մայր Աթոռի թեմերէն շատերը, շատոնց ի վեր որդեգրած են այս դրութիւնը իրենց թեմական կանոնադրութիւններուն մէջ, բայց ոչ բոլորը դժբախտաբար, ինչպէս օրինակ՝ Հարաւային Ամերիկայի թեմերը, հակառակ տարիներէ ի վեր իմ հետևողական ճիգերուն և յորդորներուն:

Ե. Տեղեակ եմ որ կարծիք կայ ձեր կողմերը թէ Օսմանեան կայսրութեան օրէնսդրութեան և Լիբանանեան արդի պետութեան օրէնսդրութեան միջև ինչ որ առնչութիւններ պահպանուած են կրօնական համայնքներու վերաբերեալ, և որ հետևաբար «Ազգային Սահմանադրութիւն»-ը ևս դրոշ չափով կը նկատուի իր իրաւասութիւնը պահած ըլլալ: Ես կը կատարածիմ այդ առնչութեան իրաւական ու գործնական այժմէութեան վրայ Լիբանանեան պետական արդի օրէնսդրութեան մէջ: Յամենայն դէպս կ'ուզեմ դիտել տալ որ «Ազգային Սահմանադրութենէն» առնուած քանի մը տրամադրութիւններու ներմուծումը Հայ որևէ Եկեղեցւոյ կանոնադրութեան մէջ բնաւ չի նշանակեր «Ազգային Սահմանադրութեան» ի զօրու ըլլալու պարագայ: Մնաց որ «գաւառական», «քաղաքական» ժողովներ «Ազգային Սահմանադրութենէն» առնուած անուանումները, բոլորովին չեն համապատասխաներ այժմու որևէ հայ եկեղեցական համայնքի իրաւական և իրական պայմաններուն: Ո՞ր պետութիւնը պիտի հանդուրժէր իր հողամասի վրայ գործող հայ եկեղեցական համայնքի մը մէջ՝ «քաղաքական ժողով»-ի մը գոյութիւնը: Այնուամենայնիւ եթէ նոյնիսկ նման առնչութեան մը մասին կարելի պիտի ըլլայ խօսիլ, այդ պիտի վերաբերի միմիայն Լիբանանին և գուցէ Սուրիային, բայց ոչ մէկ պարագայի մեր Եկեղեցւոյ ամբողջին:

Աւելորդ չենք նկատեր ի՞նչէլ նաև այն պատմական իրողութիւնը թէ Օսմանեան տիրապետութեան շրջանին, Պոստյ «Ազգային Սահմանադրութեան» մշակման ու գործադրման օրերուն, Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը, իր իրաւասութեան ներքև գտնուող բոլոր համայնքներով (ներառեալ Կիպրոսն ու Հալէպը), մշտապէս մերժած է ընդունիլ «Ազգային Սահմանադրութիւն»-ը և հակադրուած է անոր գործադրման իր իրաւասութեան տարածքի վրայ իբրև իր Աթոռին չվերաբերող կանոնադրութիւն, որուն մէջ Կիլիկեան Աթոռի անունն ու գոյութիւնը չեն յիշատակուած:

Կ. Մեր Եկեղեցին կանոնադրութեամբ մը օժտել, կը նշանակէ ամուր ու կայուն հիմքերու վրայ դնել զայն: Հրամայական անհրաժեշտութիւն է այս նաև հայապահպանման համար: Այլևս պէտք է համոզուինք որ հայ սփիւռքը մնայուն երևոյթ է և արտաառանձնի հայութեան գոյատևման ամենաանջարժեքի վէմը մեր մայր Եկեղեցին է՝ իր գլուխը ունենալով հայրենի հողի վրայ հաստատուած Սուրբ Էջմիածինը, իրեն լծակիցներ ու գործակիցներ ունենալով նախ Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռը, նաև երկու Պատրիարքական Աթոռները և թեմական կեդրոնները: Այս եկեղեցական կառոյցի ամբողջ

ու անբաժան պահպանումը և պորացումը ամենակենսական գրավական է հայ սփիւռքի գոյատևման, թէ՛ հոգևոր, թէ՛ ազգային խմաստով: Սուրբ Էջմիածինը այդ պատմական առաքելությունը ունեցած է դարեր շարունակ և այժմ ևս պարտի հաւատարիմ մնալ իր այդ կոչումին:

Համոզուած պէտք է ըլլանք նաև բոլորս որ Հայ Եկեղեցին իր հայապահպանման առաքելությունը չի կրնար լիութեամբ կատարել առանց Սուրբ Էջմիածնի, ոչ միայն որովհետև ան ծննդավայրն է և կանոնական առումով բազմադարեան Աթոռը Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ընդհանրական Հայրապետութեան, այլ նաև որովհետև ան կը գտնուի մեր մայր երկրի՝ Հայաստանի սրտին վրայ, սրբազան Արարատի նայուածքի տակ: Սփիւռքահայը իր իսկ փրկութեան համար արդի իրական Հայաստանի մէջ պէտք է տեսնէ յաւիտենական Հայաստանը: Ով որ ներկայ Հայկական Հանրապետութեան մէջ չի տեսներ յաւերժական Հայաստանը, նա անկարող կը դառնայ տեսնելու որևէ Հայաստան: Գաղափարախօսական նախասիրությունները երկրորդական են: Գոնէ հայ հոգևորականը այս ճշմարտություններու վեմին վրայ կանգնած պէտք է մնալ անալլալ կերպով:

Է. Այս ճշմարտությունները կը թելադրէ մեզի ամեն ճիգ ի գործ դնել անբաժան, ամուր և կենսունակ պահպանելու մեր նախնեաց սուրբ Եկեղեցին մայր երկրի ու հայ սփիւռքի տարածքի վրայ իբրև գերագոյն գրավականը հայապահպանման: Ի խնդիր այդ կրօնական ու ազգային առաքելութեան կենսագործման, անհրաժեշտ է օժտել մեր Եկեղեցին կանոնադրութեամբ մը որ ամրապնդէ անոր ներքին միությունը, ամրապնդէ անոր՝ ժողովուրդի մայր դաստիարակի կոչումը Սուրբ Հոգւով ներշնչուած, ապահովէ ներդաշնակ գործակցությունը անոր նուիրապետական կառույցի բոլոր միաւորներուն միջև:

Քաջ գիտակցելով հանդերձ թէ մեր օրերու հայութեան ցրուածութեան պայմաններուն մէջ դժուար պիտի ըլլայ մշակումը և գործադրումը նման կանոնադրութեան մը, համոզուած եմ սակայն թէ պէտք է գիտնանք լաղթահարել բոլոր դժուարությունները փրկելու համար մեր Եկեղեցին և սփիւռքի մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ անկապմաներայ ու տագնապալի վիճակէն:

Կը հասկնամ նաև ու կը պզամ որ Ս. Էջմիածին-Կիլիկեան Աթոռ յարաբերությունները կանոնադրութեամբ մը յստակելու ճանապարհին, ձեր միաբաններէն շատերը մտահոգուած պիտի ըլլան Կիլիկեան Աթոռի «անշքացումի» կասկածով:

Ես չեմ կրնար ըմբռնել սակայն թէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանութեան ամրապնդումը ամբողջ հայ սփիւռքի տարածքի վրայ, եղբայրական սերտ գործակցութեամբը Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռի և մեր երկու Պատրիարքական Աթոռներուն, կրնայ անշքացնել ձեր Աթոռը:

Քան և հինգ տարիներէ ի վեր գոյատևող մեր եկեղեցական տագնապը, այո, արուեստականօրէն ստեղծած է այդ մտայնությունը, այդ թիւր տեսողությունը ձեր Աթոռէն ներս, որովհետև քան և հինգ տարիներ շարունակ պարգացած է մրցակցութեան և նոյնիսկ հակադրութեան իրավիճակ: Կարծեք, Սուրբ Էջմիածին և Կիլիկեան Աթոռ միևնույն Եկեղեցին չըլլային և չունենային նոյն առաքելությունը: Տէր Աստուած, ինչպէ՞ս ընենք մենք և դուք որ Անթիլիասի ափերուն մեր եղբայրները ձերբազատուին այդ հոգեվիճակէն, այդ բարդոյթէն: Պիտի ուզէի աղաղակել որ բոլորը լսեն՝ թէ Սուրբ Էջմիա-

ծինը նաև Կիլիկեան մեր եղբայրներուն նոյնքան հարապատ հայրենական Տունն է:

Ահա թէ ինչու կը կրկնեմ իմ առաջադրանքը և յառաջիկայ աշնան կը հրաւիրեմ Չերդ Սրբութեան իրաւոր ներկայացուցիչները, որպէսզի Մայր Աթոռիս Յանձնաժողովին հետ միասին քննարկեն կանոնադրութեան նախագիծը և փորձեն զայն դնել բոլորիս համար ընդունելի ձևի մէջ: Իմատուութեամբ ու հեռատեսութեամբ մշակուած եկեղեցական կանոնադրութեան՝ մը կենսագործումէն կարևորագոյն չափով կախուած է սփիւռքի հայութեան ճակատագիրը:

Իմ հայեացքը դէպի հայութեան ապագան յառած, կոչ կ'ընեմ Չերդ Սրբութեան և Աթոռիդ պատասխանատու մարմիններուն որ սոյն հարցերը քննարկուին մեր մայր եկեղեցւոյ կանոնական միութիւնը զօրացնելու և եկեղեցիով սփիւռքի մեր պանդուխտ ժողովուրդի ազգային միասնութիւնը ամրապնդելու գիտակցութեամբ, ձերբապատուելով տեղական, պարագայական, կողմնակի կաշկանդումներէն ու Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը դիտելով հայոց պատմութեան վերջին մօտ երկիւղարարմեայ հորիզոնի բարձունքէն:

Այս ամէնը յանձնելով Չերդ Սրբութեան ուշադրութեան, կը մաղթեմ Չերդի անսպառ կորով և ոգի շինարար լաւատեսութեան:

Լիակատար քաջառողջութեան մաղթանքով ու եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*
* *

Թ. 292

7 Յունիս 85 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Ա ն թ ի լ ի ա ս

Չերդ Սրբութիւն,

Սիրոյ ողջոյնով գրի կ'առնենք սոյն Մեր նամակը ուղղեալ Չերդ Սրբութեան:

Կ'անդրադառնանք Մեր 21 Յունուար 1985 թուակիր նամակին, որով կը նախատեսէինք հրաւեր ուղղել Չերդ, որպէսզի Չեր ներկայացուցիչները ուղարկէք Մայր Աթոռ յառաջիկայ աշնան, Մեր Յանձնաժողովի հետ համատեղ քննարկելու համար նախագիծը մեր եկեղեցւոյ կազմական կանոնադրութեան:

Մայր Աթոռիս Յանձնաժողովը ունի հետևեալ կազմը՝

1. Տ. Ընդրիք Արք. Գալուստեան, Պատրիարք Հայոց Թուրքիոյ,
2. Տ. Տիրան Արք. Ներսիսեան, Ատենապետ Յանձնաժողովոյ,
3. Տ. Սիոն Արք. Մանուկեան, Ատենապետ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի,

4. Տ. Ներսէս եպս. Պոլապալեան, Դիւանապետ Մայր Աթոռի և
5. Տ. Մեսրոպ Ժ. վրդ. Գրիգորեան, Հայրապետական Պատուիրակ Հայոց

Կեդրոնական Եւրոպայի և ատենադպիր Յանձնաժողովոյ:

Խորհրդապահաբար ներկակ Չերդ կը լղենք օրինակ մը վերոյիջեալ նա-

խագիծեն, որ հրապարակելի չէ, բաղկացած 92 յօդուածներէ, առաջարկելով որ ծանօթանաք բովանդակութեան և ի հարկին Ձեր ցուցմունքները տաք Աթոռիդ ներկայացուցիչներուն, որոնք Մեր Յանձնաժողովի հետ միասին պիտի քննարկեն զայն: Եթէ յաջողինք նախագիծին ընդունելի ձև տալ, լետ այնու այն պէտք է ուղարկուի մեր Եկեղեցւոյ բոլոր թեմերուն, ստանալու համար նաև անոնց կարծիքները և առաջարկները, որոնք լետոյ պիտի քննարկուին դարձեալ նոյն միացեալ Յանձնաժողովին կողմէ:

Ուրեմն սոյն Մեր գրով կը կրկնենք Մեր հրաւերը որ հաճիք Ձեր Աթոռի ներկայացուցիչ երեք եպիսկոպոսներ ուղարկել, մասնակցելու նախագծի քննարկման աշխատանքներուն ի Ս. Էջմիածին յառաջիկայ **հոկտեմբերի 10—15:**

Այս հրաւերով, ի մտի ունինք նաև անցեալ տարի Փարիզի մէջ Մեր և Ձեր յայտնած փափաքը, շարունակելու հանդիպումները և բանակցութիւնները Մայր Աթոռի և Ձեր Աթոռի միջև, մեր առջև դրուող հարցերու բարուք լուծման ի խնդիր: Բնականաբար, մեր Եկեղեցւոյն ամբողջութեան վերաբերող կապմական Կանոնագրութեան մը մշակումը ևս բարի պատեհութիւն մըն է նոր յարաբերութիւններ վարձացնելու և գործակցութեան գետին ստեղծելու մեր Աթոռներու միջև:

Վստահ եղէք թէ Մենք ևս, նաև Մեր Յանձնաժողովի անդամները, քաջ կը գիտակցինք այն դժուարութիւններուն, որոնց առաջ կը գտնուի մեր օրերուն կիրառելի կապմական Կանոնագրութիւն մը մշակելու ծրագիրը, սակայն նոյն չափով համոզումը ունինք նման Կանոնագրութեան մը գոյառման հրամայականին:

Եթէ կը հաւատանք որ քրիստոնէական հաւատքը հոգիներու փրկութեան առաքելութիւն մըն է աշխարհի վրայ, եթէ կը հաւատանք որ նա ինքնանպատակ հոգևոր-բարոյական մնայուն արժէք է պատմութեան մէջ իրագործուող ու, եթէ կը հաւատանք որ հայ առաքելական Եկեղեցին ևս այդ առաքելութիւնը ունի մեր ազգի ծոցին մէջ, մենք այսօրուաններս պատասխանատւութեան զգացումը պէտք է ունենանք, անցեալով փառաւոր մեր մայր Եկեղեցւոյ ապագայի և ցիրուցան մեր ազգի պատմութեան առջև, և ջանք պէտք չէ խնայենք զայն օծտելու Կանոնագրութեամբ մը որ օրինական հիմքը հանդիսանայ մեր Եկեղեցւոյ կապմական դրութեան, ներքին միութեան ու համագործակցութեան:

Մեր իմաստութենէն, մեր հեռատեսութենէն և իրաւ գործակցութենէն կախում ունի, մանաւանդ սփիւռքի տարածքի վրայ ապրող մեր հաւատացեալ ժողովուրդի ապագան, կրօնական և ազգային գոյատևման տեսակետներէն:

Ձեզ քաջառողջութիւն մաղթող եղբայր ի Քրիստոս՝

Վ Ա Ջ Գ Է Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

*
* *

Թիւ 257:85

Անթիլիաս 17 Յունիս, 1985

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՆ ՎԵՀԱՓԱՌ S. S. ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր 21 Յունուար, 1985 թուակիր եւ 33 թուահամար նամակը, որուն մէջ հանգամանօրէն կը խօսիք Հայ Եկեղեցւոյ համար վարչա-կազմակերպչական կանոնագրութեան մը անհրաժեշտութեան մասին եւ առ այդ կ'անդրադառնաք բազում առնչակից հարցերու, կատարելով հոգեւոր մատնանշումներ պատմական, կանոնական եւ այժմեական բնոյթ կրող հիմնական իրողութիւններու եւ արդար մտահոգութիւններու մասին:

Ինչպէս Մեր 29 Հոկտեմբեր 1985 թուակիր եւ 345:84 թուահամար նամակին մէջ յայտնած էինք, այս առնչութեամբ, անցեալ տարուան Փարիզի մէջ Մեր եղբայրական հանդիպումէն ետք Մեր միջեւ փոխանակուած գրութիւնները, յատկապէս Ձեր 8 Հոկտեմբեր 1984 եւ 517 թուահամար նամակը օրակարգի նիւթ պիտի ընէինք՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեանս Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովին մէջ: Մեր սրտի անհանգըստութիւնը եւ անոր հետեւանքով նախ այստեղ Ամերիկեան հիւանդանոցին մէջ, սկսբնական եւ անմիջական դարմանումը, բժշկական խորհուրդով՝ երկամեայ բացարձակ հանգիստը եւ ապա բժշկական մասնագիտական մանրագին քննութեան ենթարկելու նպատակով մեկնումը դէպի Միացեալ Նահանգներ ուղացուցին նման ժողովի մը գումարումը: Փառք Աստուծոյ, Մեր առողջութիւնը վերագտնելու ճամբուն մէջ ենք հիմա եւ Ապրիլեան Եղեռնի 70-ամեակի արժանավայել կերպով նշման արարողութիւններէն եւ ձեռնարկներէն անմիջապէս ետք, առաջին իսկ հերթին, կրցանք գումարել Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը եւ երկու լրիւ նիստերով (1 եւ 8 Յունիսին) սքաղիլ անցնող տարւան Յուլիս 20-էն առդին Մեր միջեւ փոխանակուած թղթակցութիւններով եւ արծարծուած հարցերով ու արտայայտուած տեսակէտներով, Փարիզի Մեր հանդիպումի ոգիին եւ մթնոլորտի լոյսին տակ:

...Մեր Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովին խորհրդակցութեան հիմնական առարկան եղաւ Հայ Եկեղեցւոյ վարչա-կազմակերպչական կանոնագրութեան մշակման մասին Ձեր արտայայտած գաղափարները եւ կատարած գործնական նախաձեռնութիւնները: Յիշած էք, որ Ձեր «նշանակած նորակապ Յանձնաժողովը կարելոր աշխատանք կատարեց եւ կարողացաւ կազմել եկեղեցական կանոնադրութեան նախագիծի մը կմախքը, ամփոփուած 84 յօդուածներու մէջ» (8 Հոկտեմբեր 1984):

Ի պատասխանի Ձեր սոյն նամակին, Մենք անձնապէս գրեցինք Ձեր Սիրեցեալ եղբայրութեան Մեր 29 Հոկտեմբեր 1984 թուակիր նամակով եւ յայտնեցինք Մեր վերապահութիւնը այն գործընթացին (procedure) մասին, որով յառաջ կը տարուի պատրաստութիւնը նման կենսական կարեւորութիւն ունեցող կանոնագրութեան մը, որ կը շահագրգռէ ամբողջութիւնը Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին: Յատակօրէն յայտնեցինք Մեր փափաքն ու դիրքը այդ առնչութեամբ, ըսելով.—

«Բնականօրէն քննելի կարելոր հարցերէն մեկն է Հայց. եկեղեցւոյ ընդհանուր կանոնագրութեան մը հարցը, Հայց. եկեղեցւոյ բարեկարգութեան

շրջագծին մեջ: Եւ ճիշդ այդ կարելությունն համար, Փարիզի Մեր հանդիպումին եւ անկէ ետք երկիցս յայտնեցինք Չեզի Մեր փափաքն ու հիմնական տեսակետը, թէ՛ բոլոր հարցերու ճշդումը, քննութիւնը եւ անոնց մասին կարելի եզրակացութեանց յանգումը պէտք է որ տեղի ունենան Հայց. եկեղեցւոյ ամբողջութեան կողմէ, բոլոր նուիրապետական Աթոռներու մասնակցութեամբը:

«Կը նկատենք որ մեր եկեղեցիին եւ ազգին համար հոգեւոր եւ ազգային գերագոյն շահերուն հետ կապուած կանոնադրութեան մը այնքան նուրբ հարցը արդէն իսկ սկսած է քննարկուիլ եւ նոյնիսկ սկսբնական նախագծումներու ալ յանգիլ, 84 յօդուածներէ բաղկացած կանոնադրութեան նախագծով մը, որ պատրաստուած է Չեր կողմէ նշանակուած Յանձնաժողովով մը, որուն մեջ մեր Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռը ոչ մէկ ներկայացուցիչ ունի»:

Եւ յիշելէ ետք Մեր մտահոգութիւնները աւելցուցինք եւ եզրակացուցինք.

«Այս եւ նման մտահոգութիւններէ առաջնորդուած եւ Հայց. եկեղեցւոյ միութիւնը ամուր պահելու նախանձախնդրութենէն մղուած՝ Մենք յստակօրէն եւ բազմիցս յայտնեցինք Չերդ Սրբութեան Մեր փափաքը եւ դիրքը, որով ուղեցինք որ Հայց. եկեղեցւոյ նուիրապետական բոլոր Աթոռներու մասնակցութեամբ ճշդուին բարեկարգութեան հարցերը եւ միասնօրէն քննուին, որպէսզի կարելի ըլլայ միասնական ձեւով ընդունելի եզրակացութիւններու յանգիլ: Եւ այս ուղղութեամբ Մեր նախորդ, I Հոկտեմբեր եւ 307:84 թուահամար նամակով առաջարկեցինք որ խորհրդակցութիւն մը տեղի ունենայ նուիրապետական Աթոռներու Գահակալներուն միջեւ, որպէսզի միասնօրէն լառաջ տարուին Հայց. եկեղեցւոյ բարեկարգութեան հարցին ծրագրումը եւ քննութիւնը: Տրուած ըլլալով հարցին խիստ այժմէականութիւնը, դարձեալ կը կրկնենք Մեր փափաքն ու առաջարկը:

«Մենք համոզուած ենք որ բնական ձեւը պիտի ըլլայ ա՛յս գործընթացը (procedure) երբ մանաւանդ մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի ներկային ընդհանրական շահերը կը պահանջեն այդ միասնականութիւնը: Եղբայրօրէն կը փափաքինք, որ բարձրագոյն աստիճանի կարելությունեամբ նկատի ունենաք Մեր այս մօտեցումը, որով սկիզբէն իսկ կարելի կը դառնայ առաջըլլառնել հետագայի շփոթութիւններու, թիրիմացութիւններու եւ դժուարութիւններու»:

Այս բոլորի յոյսին տակ, երբ կարդացինք Չեր 21 Յունուար, 1985 թուակիր նամակը, վարմանքով նկատեցինք, որ Չեր կողմէ ոչ մէկ ձեւով անդրադարձում եւ ընդառաջում կար Մեր փափաքին, առաջարկին եւ մօտեցումին: Մեր վարմանքը մեծ եղաւ մասնաւորաբար անոր համար, որ Փարիզի Մեր հանդիպումին այն յստակ տպաւորութիւնը ստացած էինք, որ նոր էջ մը կը բացուէր երկու Կաթողիկոսական Աթոռներու փոխ-յարաբերութեան մեջ միասնաբար ճշդելու, քննելու եւ որոշելու այն հարցերը, որոնք կապուած են Հայց. եկեղեցւոյ ամբողջութեանը հետ: Մենք սրտի գոհունակութեամբ ողջունեցինք որ Դուք ալ նոյն ըմբռնումը կը բաժնէք, ինչպէս վայն յստակօրէն արտայայտած էք Չեր Հոկտեմբեր, 1984 թուակիր եւ 503 թուահամար նամակին մեջ ըսելով.—

«Այս Իմ գրով նախ կը փափաքիմ վերահաստատել մեր համաձայնութիւնը, որ աշխատինք միասնական ճիգերով հեռացնելու բոլոր այն կացութիւնները եւ մտայնութիւնները, որոնք կը խոչընդոտեն կեանքի կոչել մեր եկեղեցւոյ ներքին միութիւնը եւ մեր Աթոռներու եղբայրական գործակցու»

թիւնը: Այդ նպատակաւ եւ եւս կը նախատեսեմ հետագայ հանդիպումներ եւ բանակցութիւններ Մայր Աթոռիս եւ Չեր Աթոռի ներկայացուցիչներուն միջեւ»:

Ինչպէ՞ս բացատրել, հետեւաբար, Չեր հետագայ նամակներուն (8 Հոկտեմբերի, 1984 եւ մանաւանդ 21 Յունուարի, 1985) մէջ խորհրդակցութեան եւ գործակցութեան համար Մեր կատարած խտակ առաջարկներուն բոլորովին անտեսումը:

Մեր Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը վերադարձաւ այս իրողութեան: Այսքան կարելոր, կենսական հարցի մը, ըստ մեր ծանօթութեան՝ իր տեսակին եւ տարողութեան մէջ նախընթաց չունեցող կանոնագրութեան մը մշակման պարագային, բնական էր անտեսումը Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռին: Առանց այս Աթոռին հետ խորհրդակցելու, առանց հիմնական ուղղութիւնները նախապէս միասնաբար ճշդելու, ըմբռնելի՝ է Հայ Եկեղեցւոյ վարչա-կազմակերպչական կանոնագրութեան մը մշակման համար նման Յանձնախումբ մը նշանակել որուն մէջ ռեւէ մասնակցութիւն չունենայ Կիլիկեան Ս. Աթոռը սոյն գործի սկզբնական եւ այնքան կարելոր հանգրուանէն իսկ: Այժմ Մենք վեկ վը գտնենք կատարուած իրողութեան մը առջեւ: Արդէն իսկ պատրաստուած նախագիծ մը կայ, որուն մէջ ճշդուած են հիմնական նախադրեալները եւ գլխաւոր գիծերը՝ «մեր Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու, Եպիսկոպոսական Ժողովի (մեծ Սինոդ), Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի (փոքր Սինոդ), թեմական առաջնորդութիւններու եւ այլ միաւորներու փոխարաբերութիւններն ու իրաւատւեանց եւ գործունէութեան սահմանները»: Մշակուած են 84 յօդուածներ: Այս բոլոր հիմնական կէտերուն մէջ հարցունեցա՞ւ կարծիքը, փորձուեցա՞ւ գիտնալ տեսակէտն ու դիրքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին: Խոր ցաւով եւ արդար նախանձախնդրութեամբ հարց կու տանք. ինչո՞ւ անտեսումը Կիլիկեան Ս. Աթոռին: Ինչո՞ւ այս խտրական վերաբերումը, մանաւանդ երբ քանիցս արտայայտած ենք Մեր պատրաստակամութիւնը միասնաբար աշխատելու թե՛ ծրագրումի, թե՛ քննարկումի եւ թե՛ եզրակացումի հանգրուաններուն վրայ:

Ուստի, այս առիթաւներէ լոյսին տակ, բնականօրէն Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռը չի կրնար իր մարմնակցութիւնը բերել յառաջիկայի ռեւէ աշխատանքներու այս մարպին մէջ: Եթէ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի համար կանոնագրութիւն կը պատրաստուի՝ ոչ մէկ ըսելիք ունինք: Միայն մեր ուրախութիւնը կը յայտնենք որ Ս. Էջմիածնի Մայր Աթոռն ալ կ'ունենայ փր վարչա-կազմակերպչական կանոնագրութիւնը, ինչպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռը 1941-էն ասդին ունեցած է եւ այսօր ալ վերամշակուած ձեւով ունի իր կանոնագրութիւնը, որուն հիմքը Ազգային Սահմանադրութիւնն է, եւ որ պատշաճեցուած է մեր արդի կեանքի պայմաններուն: Իսկ եթէ Չեր կողմէ ծրագրուած այս նոր կանոնագրութիւնը կը վերաբերի ամբողջ հայ եկեղեցւոյ, ներառեալ Կիլիկեան Ս. Աթոռը, այժմէն իսկ կ'ուզենք խտակօրէն ըսել որ վերեւ մատնանշուած տուեալներու լոյսին տակ Կիլիկեան Աթոռը ոչ մէկ ձեւով պարտաւոր կամ յանձնառն կը զգայ ինքզինք նման կանոնագրութիւն մը այս ձեւով, այսպիսի գործընթացով քննելու եւ անոր ընդառաջելու: Եթէ Հայց. եկեղեցւոյ միասնականութիւնը մեր բոլորի գլխաւոր մտահոգութիւնն է, ինչպէս է, Մեր հայեցողութեամբ, ապա այսպիսի խտրական վերաբերում մեր Աթոռին նկատմամբ խոտոր կը համեմատի այդ միութեան եւ միասնականութեան հարապատ եւ վաւերական ըմբռնումին եւ նախանձախնդրութեան: Պէտք է փոխուի այդ խտրական վերաբերումը, որպէսզի իսկական

միասնականության ոգին արտայայտուի սկիզբէն մինչեւ վերջ ոսկեթելի մը նման:

Չեր նամակներուն մէջ կան բազմաթիւ հարցեր, որոնք կը կարօտին խոր ուսումնասիրութեան եւ իսկական տիպոկի: Որովհետեւ, այնտեղ արծարծուած են տեսակէտներ, նշուած են իրողութիւններ, որդեգրուած են որոշ սկզբունքներ, որոնք շատ հարցականներ կը ստեղծեն եւ որոնք անհրաժեշտօրէն կը կարօտին լուսաբանման: Կարելի չէ նամակի մը սահմանին մէջ հանգամանօրէն անդրադառնալ անոնց եւ անոնց լրջութեան եւ կարեւորութեան պահանջած խորութեամբ եւ լայնութեամբ, պատմական, իրաւական, եկեղեցագիտական եւ մեր եկեղեցւոյ ու ազգի ներկայ ալժմէական կարիքներու եւ գերագոյն շահերու տուեալներուն լոյսին տակ արտայայտուել այդ բոլորի մասին:

Ամէն բանէ առաջ, սական, կարեւորը հարցերու ճշդումին, քննութեան, ծրագրումին եւ հասարակաց միասնական ոգիի եւ մօտեցման եղանակին յստակեցումն է, որ Մենք կը սպասէինք որ կատարուէր նախքան գործնական նախապատրաստական աշխատանքներու ձեռնարկելը այնպիսի եղանակով մը, որ արտայայտէր Հայց. եկեղեցւոյ ամբողջութիւնը: Մինչ ներկայի Յանձնախումբը չունի այդ տարողութիւնը, եւ չի կրնար արտացոլացնել գեր մեր Աթոռի հասկացողութիւնն ու կեցումաձքը:

Յուսով ենք, որ Մեր այս բարի եւ արդար նախանձախնդրութիւնը ճիշդ կը հասկցուի Չեր և Չեր գործակիցներուն կողմէ եւ լիովին կը վերահաստատուի Փարիզի Մեր հանդիպումով որդեգրուած միասնական գործակցութեան սկզբունքն ու գործելակերպը: Միայն նման սիրոյ, փոխադարձ յարգանքի սկզբունքներէն ու իսկական գործակցական տրամադրութենէն եւ պատրաստակամութենէն կրնան յառաջ գալ դրական եւ օգտաշատ արդիւնքներ եւ բարիքներ: Այլապէս, նոր շփոթութիւններու, նոր թիրխմացութիւններու եւ դժուարութիւններու դուռ կը բացուի, ինչ որ պէտք է խնայել մեր մէկ ազգին եւ մէկ եկեղեցիին, մանաւանդ այս օրերուն, երբ մէկ եկեղեցիի զաւակաւորն ու զգացումը, ապրումն ու իրականութիւնը, մէկ հայութեան ամբողջականութեան ինքնըմբռնումը շօշափելի տուեալներ են մեր ժողովուրդի կեանքին եւ անոնց զօրացումը սպասումն է ողջ հայութեան ի սէր մեր մէկ եկեղեցւոյ ամրապնդումին եւ մեր պատուական Հայ ժողովուրդի ապագայի պայծառութեան Մայր Հայրենիքէն մինչեւ սփիւռքի չորս ծագերը:

Ընդհանրական այս մտահոգութիւններէն եւ նախանձախնդրութենէն մղուած՝ առաւել եւս կարեւոր կը զգանք որ Մեր նախորդ նամակներուն մէջ կատարած խորհրդակցութեան առաջարկները նկատի առնուին, որպէսզի միասնականութիւնը շօշափելի եւ դրական ու ամբողջական արտայայտութիւն գտնէ:

Սրտանց կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Իր իմաստութեան լոյսով պայծառացնէ մեզ բոլորս եւ Չերոյ Սիրեցեալ Եղբայրութեան պարգեւէ կատարեալ առողջութիւն եւ բեղմնալից ծառայութիւններ ի ծաղկումն Ս. Էջմիածնին եւ ի վայելումն համայն հայ ժողովրդեան:

Մնամք եղբայրական ջերմ սիրոյ ողջունիւ

ԱՂԹԱԿԻՅ

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ

*
* *

ԹԻԼ 373:85

Անթիլիաս. 30 Յուլիս, 1985

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Շնորհակալութեամբ ստացանք 24 Յունիսին Հալէպի վրայով եւ ճամբորդի միջոցաւ, Ձեր 7 եւ 15 Յունիս թուակիր եւ 292 եւ 300 թուահաւար պոյգ նամակները եւ օրինակ մը հայ եկեղեցւոյ կազմական Կանոնագրութեան նախագիծէն:

Պատասխանելով Ձեր պոյգ նամակներուն, այսու գրով

...Գալով Ձեր 15 Յունիսի նամակին, նախ շնորհակալութիւն կը յայտնենք որ Մեզի ուղարկած էք հայ եկեղեցւոյ վարչակազմակերպչական Կանոնագրութեան նախագիծի պատճէնը, պատրաստուած Ձերդ Սրբութեան կողմէ նշանակուած Յանձնախումբի մը կողմէ: Շնորհակալութիւն նաեւ Ձեր հրաւերին համար, որով կը փափաքիք որ երեք եպիսկոպոսներ ուղարկենք որպէս Մեր Աթոռի ներկայացուցիչները, յառաջիկայ Հոկտեմբեր 10—15ի միջոցին Ս. Էջմիածնի մէջ Ձեր Յանձնախումբի անդամներուն հետ միասնաբար քննարկեն պատրաստուած նախագիծը:

Այս կենսական հարցի առնչութեամբ նախքան Ձեր 15 Յունիսի նամակին ստացումը, Մենք արդէն 17 Յունիս թուակիր նամակ մը ուղղած ենք Ձեզի եւ հեռագրով ալ փնացուած՝ անոր առաքումը Մեր կողմէ: Այդ նամակին մէջ լայնօրէն եւ նախանձախնդրաբար արտայայտած ենք Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռի սկզբունքային տեսակէտը նման Կանոնագրութեամբ մը պատրաստութեան ընթացքին մասին: Այստեղ եւս, պարտք կը զգանք յայտնելու, ինչպէս անցնող տարուան ընթացքին քանիցս արտայայտեցինք, Մեր պատրաստակամութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ միասնաբար խորհրդակցելու, ծրագրելու եւ աշխատելու Հայց. եկեղեցւոյ բարեկարգութեան հետ առնչուած բոլոր հարցերու ուսումնասիրութեան, քննարկման եւ տնօրինման գործին մէջ: Մեր ջերմ սպասումն է որ միասնական աշխատանքի, ամբողջական գործակցութեան այն սկզբունքը, զոր յստակօրէն բացատրած ենք Մեր 17 Յունիսի նամակին մէջ, ընդունուի Ձերդ Ս. Օծութեան կողմէ, որպէսզի հայ եկեղեցւոյ բարեկարգութեան հետ առնչուած բոլոր աշխատանքները կատարուին երկու Կաթողիկոսական Աթոռներու կողմէ միասնաբար, փոխադարձ սիրոյ եւ յարգանքի ու հասկացողութեան ոգիին եւ համապատասխան գործընթացին համաձայն, եւ որպէսզի տեղի չտրուի նոր թիւրիմացութիւններու եւ դժուարութիւններու հայ ազգային եկեղեցական կեանքին մէջ:

Քաղցր յոյսով կը սպասենք որ Մեր պատրաստակամութիւնը դրապէս ընդառաջուի, որպէսզի միասնաբար կարենանք յառաջ տանիլ հայ եկեղեցւոյ բարեկարգութեան նուիրական եւ նուրբ աշխատանքը, յամրացումն մեր եկեղեցւոյ միութեան եւ ի բարին մեր համայն հայ ժողովուրդին: Մենք կը հաւատանք որ նման գործելակերպով կը հրճուին մեր ժողովուրդի վաւակները ի սփիւռս աշխարհի եւ բարոք կ'արդիւնատրուին մեր բոլորի ջանքերը ի խնդիր մեր եկեղեցւոյ պօրացման, որ գերագոյն շահն է մեր պաշտելի հայ ժողովուրդին:

Ահա այս նախանձախնդրությունն մղուած՝ կը սպասենք բարի լուրերու ի պատասխան Մեր 17 Յունիս թուակիր նամակին, որպէսզի ըստ այնմ կարենանք ճշդել Մեր մասնակցութիւնը Հայ եկեղեցւոյ ամբողջութիւնը շահագրգռող եւ Հայ ժողովուրդի ներկայի ու ապագայի կեանքին բարիքին ձգտող այնքան կենսական եւ հրամայական հարցի քննարկման: Յուսանք մօտ ատենէն կը ստանանք Ձեր եղբայրական լուսադրիչ խօսքը եւ Փարիզի մեր հանդիպումի ոգիին եւ մթնոլորտին մէջ կը յաջողինք շարունակել երկու Կաթողիկոսական Աթոռներու գործակցութիւնը ի ծառայութիւն մէկ եկեղեցւոյ եւ ի սպասաւորութիւն մէկ ժողովուրդի:

Ի բոլոր սրտէ կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Իր երկնային իմաստութեամբ լուսաւորէ մեր բոլորի քաղերը Իր Քրիստոսատունկ, Լուսաւորչարմատ եւ Մեսրոպայիսնամ «փոքր ածու» ի մշակութեան նուիրագործ աշխատանքին մէջ, որպէսզի մեր Տիրոջ բառերով այդ աշխատանքը պտղավորուի «ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր» (ՄԱՐԿ., Դ. 8):

Մնամք եղբայրական ջերմ սիրով
ԱՂԹԱԿԻՑ

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

*
* *

№ 397

Ս. Էջմիածին, 24 Օգոստոս 1985 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ա ն թ ի լ ի ա ս

Եղբայր Մեր սիրելի,

Այս օրերուն վերջապէս իմ ձեռքը հասաւ Ձեր 17 Յունիս 1985 թուակիր կարևոր նամակը, զոր կարդացի լարուած ուշադրութեամբ:

Ձեզ ի լուսաբանում ստորև կը ներկայացնեմ իմ մտածումները ամփոփուած հետևեալ պարբերութիւններուն մէջ:

1. Իրապէս կը ցաւիմ որ իմ 21 Յունուար 1985 թուակիր և 7 Յունիս 1985 թուակիր նամակները ուղիղ կերպով չեն հասկցուած Ձեր և Աթոռիդ յարգարժան Ազգային-Կեդրոնական Վարչութեան կողմէ: Հակուած եմ խորհելու թէ որոշ դիւրապագայութիւններ և կասկածամտութիւն դեր խաղացած են այս առթիւ: Այդպէս չէ ինչպէս կ'ենթադրէք: Որևէ չափով և որևէ ձևով Կիլիկեան Աթոռը անտեսելու կամ վախ կատարուած իրողութեան մը առջև դնելու տրամադրութիւն չկայ այստեղ:

Իրողութիւնը այն է որ ես ևս որոշ տարակուսանք ունէի կանոնադրութեան մը նախագիծը մշակելու վերաբերեալ և Յանձնաժողովի կազմութիւնը պարպապէս նախափորձ մըն էր ինծի համար, թէ արդեօք հնարաւոր պիտի ըլլայ՝ նման կանոնադրութեան մը պատրաստութեան ձեռնարկել, որ իր մէջ ընդգրկէ մեր Եկեղեցւոյ նուիրապետութեան ամբողջ կառուցը և ընդունելի ըլլայ բոլորիս համար: Եւ երբ Յանձնաժողովը իր առաջին փորձը կատարեց, ես լաւատես դարձայ, արդէն անփրաժեշտ նկատեցի որ կրնանք վախ քննարկութեան ենթարկել Ձեր Կաթողիկոսական Աթոռի ներկայացուցիչներուն հետ



ԹԻԵՐԻ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ
ԵԿԵՂԵՑԻՆ ՍԵՊՈՒՀ ԼԵՌԱՆ ՎՐԱ, ԵՐԶՆԿԱՅԻ ԵՎ ՔԵՄԱՆԻ ՄԻՋԵՎ



ՀՈՎՀԱՆՆԵՍ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՌՈՒՑԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ
ՆՈՐԱՀԱՅՏ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՄՈՏ (Ժ դար)

միատեղ: Չեպ կը վատահեցնեմ թէ ես որևէ ձևով իմ վերաբերումը չեմ ճշդած պատրաստուած այս նախնական նախագծին նկատմամբ և որևէ չափով չեմ մասնակցած անոր մշակման:

2. Հետևաբար կը կրկնեմ իմ առաջարկը որ հաճիք սուրբ Էջմիածին ուղարկել Ձեր ներկայացուցիչները, որպեսպի մեր Յանձնաժողովի անդամներուն հետ խառն Յանձնաժողով մը կազմած, նախագիծը քննութեան ենթարկեն յօդուած առ յօդուած: Ամէն ինչ վերաքննելի է փոխադարձ համաձայնութեամբ: Ձեր Աթոռը ամէն հնարաւորութիւն ունի այս առթիւ իր տեսակէտները ներկայացնելու:

3. Այս առաջարկով, ես, իբրև Մայր Աթոռի Գահակալ, ուղղակի Ձերդ Սրբութեան կը դիմեմ, նաև ճամբայ մը բանալու՝ 1957-էն ի վեր մեր Աթոռներու եղբայրական գործակցութիւնը արգելակող հարցերը լուծելու համար: Այդ էր նաև Փարիզ մեր վերջին հանդիպման երկուքիս բաղձանքը, որ իր արտայայտութիւնը գտան մեր հրապարակած հաղորդագրութեան մէջ:

Նոյն այդ բաղձանքի արտայայտութիւնն է, որով այսօր ես կը դիմեմ Ձեպի որ միասնաբար պատրաստենք ապագայ կանոնադրութեան մը նախագիծը, որովհետև նոյն կանոնադրութեան մը մշակումով լուծած պիտի ըլլանք բոլոր այն հարցերը, որոնք առարկան կրնան հանդիսանալ մեր Աթոռներու միջև բանակցութեանց: Բանակցութիւններով մեր Աթոռներու միջև լուծելի հարցերը և կանոնադրութեան մը նախագիծը մշակելու աշխատանքը գրեթէ նոյն բաներն են: Հայ Եկեղեցւոյ կանոնադրութեան մը մէջ բանաձևել մեր Աթոռներու փոխադարձ կանոնական յարաբերութիւնները, իրաւասութեան սահմանները և գործակցութեան կերպերը՝ կը նշանակէ՝ ipso facto լուծում տուած ըլլալ մեր Աթոռներու միջև գոյութիւն ունեցող անհասկացողութեանց: Ուրիշ խօսքով, միասնաբար ձեպի հետ կանոնադրութեան մը նախագիծին վրայ աշխատիլ՝ կը նշանակէ շարունակել մեր Աթոռներու բանակցութիւնները, լուծելու համար մեր առջև ծառացող հարցերը:

4. Եթէ միացեալ ուժերով և եղբայրական սիրով տոգորուած՝ յաջողինք մեր Եկեղեցին օժտել բոլորիս կողմէ ընդունելի կանոնադրութեամբ մը, այն ատեն իրապէս լուծուած կ'ըլլան մեր բոլոր հարցերը և վերացած բոլոր թիրմացութիւնները:

Յաջողեցանք լաւ, շատ լաւ, չհաջողեցանք՝ կը նշանակէ պետք է համբերութեամբ սպասենք ի լրումն ժամանակաց:

Ամէն ինչ յստակ է: Հետևաբար, ինչո՞ւ մերժել Աթոռիդ մասնակցութիւնը ընծայել առաջարկուած փորձը կատարելու, քանի որ Փարիզ մեր հանդիպումին համաձայն գտնուեցաք որ մեր բանակցութիւնները շարունակուին: Ինչո՞ւ համար ի յառաջագունէ ըլլալ յոռետես և ժխտական:

Մեր հիմնական նպատակներէն մին է որ նման կանոնադրութեան մը մշակումով ամրապնդենք Հայաստանեայց Եկեղեցւոյ կանոնական միութիւնը և մեր Աթոռներու եղբայրական գործակցութիւնը:

Սպասելով Ձեր բարի լուրերուն, կը մնամ սիրով Ձերդ Սրբութեան արեւշատութիւն մաղթող՝ տոկուն քաջառողջութեամբ: Խաղաղութիւն ընդ ձեպ:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Թիւ 466:85

Անթիպաւ. 7 Հոկտեմբեր 1985

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ եղբայր,

Վատահաբար ցարդ ստացած էք Մեր 25 Սեպտեմբեր, 1985 թուակիր հեռագիրը՝ Հայց. Եկեղեցւոյ կանոնագրութեան հարցին առնչութեամբ Մեր Կիլիկեան Կաթողիկոսական Ս. Աթոռի դիրքին մասին:

Այսու գրով, եւ ի հետեւումն Մեր վերոյիշեալ հեռագրին, նախ շնորհակալութիւն կը յայտնենք Ձեր 24 Օգոստոս, 1985 թուակիր եւ 397 թւահամար նամակին համար, որ Մեր ձեռքը հասաւ 20 Սեպտեմբեր, 1985-ին միայն, Պրն. Մանուէլ Ադամեանի միջոցաւ, որ Հայաստանէն Հայէպի վրայով վերադառնալէն ետք անձամբ ներկայացաւ Մեզի եւ յանձնեց Ձեր նամակը:

Հարկ զգացինք Կաթողիկոսութեանս Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը բացառիկ նիստի հրաւիրել Սեպտեմբեր 25-ին, որպէսզի կարելի փութով կարենայինք Ձերդ Ս. Օծութեան փոխանցել Մեր Աթոռի տեսակէտը ի պատասխան Մեզի ուղղած Ձեր վերոյիշեալ 24 Օգոստոս, 1985 թուակիր նամակին:

Յետ խորհրդակցութեան Խառն Ժողովի հոգեւորական եւ աշխարհական անդամներուն հետ, կ'ուզենք Ձերդ Սրբութեան բարձր նկատողութեան յանձնել հետեւեալ հիմնական կէտերը Հայց. Եկեղեցւոյ կանոնագրութեան մշակման հարցին առնչութեամբ, այս հանգրուանին.

1. Ամուր կառչած մնալով մեր Ս. Եկեղեցւոյ միութեան եւ միասնականութեան սկզբունքին, անգամ մը եւս կը շեշտենք Մեր կեցուածքը, թե՛ Հայց. Եկեղեցւոյ ամբողջութեան հետ առնչուած հարցերու շուրջ հարկ է գործել միասնաբար, սկիզբէն իսկ, միասնաբար խորհրդակցելով, ծրագրելով եւ աշխատելով:

2. Որպէս բնական արտայայտութիւն Մեր այդ էական մօտեցումի եղանակին՝ փափաքեցանք որ Հայց. Եկեղեցւոյ կանոնագրութեան մը մշակման հարցին մէջ երկու Կաթողիկոսութիւնները փոխադարձ խորհրդակցութեամբ նախ ճշդէին հիմնական սկզբունքները եւ ապա խառն Յանձնախումբով մը ձեռնարկէին անոր մշակման գործնական աշխատանքին:

3. Նոյն սկզբունքէն մեկնելով, եւ հակառակ Մեր մինչեւ հիմա այդ ուղղութեամբ ըրած առաջարկութիւններու դրական ընդառաջում գտած չըլլալուն, Հայց. Եկեղեցւոյ միութեան ամրացման եւ միասնական գործունէութեան պօրացման սիրովն որոշեցինք որ մեր Կիլիկեան Ս. Աթոռը իր տեսակետները աւելի բխրեղացնէ Հայց. Եկեղեցւոյ կանոնագրութեան մը մասին: Յատուկ Յանձնախումբով մը այդ աշխատանքը պատեղ կատարելէ ետք, ինչպէս ըսած էինք Մեր հեռագրին մէջ, մինչեւ Յունուարի վերջը, Ձերդ Ս. Օծութեան պիտի փոխանցենք մեր տեսակետները յատուկ պատուիրակութիւն մը ուղարկելով ի Ս. Էջմիածին Ձերդ Ս. Օծութեան անձամբ եւ հանգամանօրէն ներկայացնելու համար Մեր դիրքն ու կեցուածքը:

4. Յուսով ենք որ Մեր տեսակետներուն մանրամասնօրէն տեղեկանալէ ետք կարելի կը դառնայ միասնաբար գտնել ուղիղ, արդիւնաւոր եւ օգտաբեր ճամբան Հայց. Եկեղեցւոյ կանոնագրութեան մը պատրաստութեան համար:

ինչպես քանիցս յայտնեցինք Ձերդ Սիրեցեալ Եղբայրութեան, ցարդ որդեգրւած գործընթացը, որ արդէն հասեր է մինչեւ 92 յօդուածներով եւ վերասրբագրեալ բնագրի մը աստիճանին, Մեզի համար ընդունելի չէ: Նման ոեւէ կարեւոր եւ նախընթաց չունեցող ու Հայց. Եկեղեցին իր ամբողջութեանը մէջ գործնապէս շահագրգռող հարցի մը համար նախ հարկ էր որ նախ ճշդութիւն կանոնագրութեան մը սկզբունքները, որպէսզի հասարակաց համամտութիւն մը յառաջ գար կանոնագրութեան ոգիին, բովանդակութեան էական տարրերուն եւ նպատակին մասին:

5. Կ'ուզեմ որ Ձեր հայեցողութեան մէջ երբեք տեղ չգտնեն այնպիսի տրամադրութիւններ, ըստ որոնց մեր Աթոռի մօտ «որոշ դիւրապագացութիւններ եւ կասկածամտութիւն» կայ այս առնչութեամբ, ինչպէս կը յայտնեք Ձեր նամակին մէջ: Մեր նախանձախնդրութիւնը Հայց. Եկեղեցւոյ միասնութեան պահպանումին հանդէպ՝ Մեզի կը թելադրէ ջանալ ըլլալ շրջահայեաց եւ հեռատես եւ չգտնուիլ այնպիսի կացութիւններու առջեւ, որոնք յետագային վնաս բերեն մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի միասնութեան, որ գերագոյն շահն է բոլորիս համար անխտիր: Մեր դժուարութիւնը այն իրողութենէն կը ծագի, որ հակառակ խորհրդակցութեան, նոյնիսկ նուիրապետական Աթոռներու Գահակալներու միջեւ անձնական տեսակցութեան եւ ըստ այնմ գործակցութեան համար Մեր արտայայտած ցանկութեան եւ կատարած առաջարկութեան, Կիլիկեան Աթոռը երբեք նկատի չառնուեցաւ տարիէ մը ի վեր տարւող աշխատանքներուն մէջ, որոնց արդիւնքը որքան ալ որ Ձեր Սրբութիւնը «նախափորձ» բռնով կը բնորոշէ, խորքին մէջ արդէն հասունցած մտայնութիւններու պսակումն է եւ որոշ սկզբունքներու որդեգրումը, որոնք նախափորձի սահմանէն շատ անդին կ'անցնին: Ըստ Մեր հայեցողութեան՝ հարկ է որ նախապէս «աշխատանքի թուղթ» մը (document de travail կամ working paper) մը պատրաստուէր ճշդելով գլխաւոր ուղղութիւնները մշակուելիք կանոնագրութեան:

6. Մեր յոյսն է եւ փափաքը, որ կարելի կ'ըլլայ Մեր պատուիրակութեան այցելութենէն ետքը գտնել յարմարագոյն եւ օգտակարագոյն եղանակը միասնաբար գործելու այս մարզին մէջ ի շահ մեր պատուական Հայ Ժողովուրդին եւ ի պայծառութիւն Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Սրտանց կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի շնորհէ կատարեալ առողջութիւն, որպէսզի ընդ երկար տարիներ շարունակեք յարաճուն պտղաբերութեամբ առաւել եւս ծաղկեցնել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր Միաբանութեամբ եւ բոլոր թեմերով ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ

ԱՂԹԱԿԻՑ

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Թիւ 266:86

Անթիքիա, 3 Յուլիս, 1986

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Այսու պաշտօնագրով, ուրախութիւնս ունինք Ձեզի ներկայացնելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեանս Պատուիրակութիւնը՝ բաղկացած Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպսկ. Աշճեանէ (Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան թեմին), Գերշ. Տ. Արամ Եպսկ. Քէշիշեանէ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին) եւ Պրն. Ոսկեբերան Արքումանեանէ (Ատենադպիր Ազգ. Կեդրոնական Վարչութեանս): Անոնք Ս. Էջմիածին կու գան ներկայացնելու Ձերոյ Վեհափառութեան Կիլիկեան Ս. Աթոռոյս տեսակետները Հայց. եկեղեցւոյ համար Ձեր կողմէ առաջադրուած կանոնագրութիւն մը պատրաստելու հարցի մասին:

1984-ի Հոկտեմբերէն ասդին մեր միջեւ կատարուած թղթակցութիւններու յոյսին տակ Պատուիրակութեանս անդամները յաճախակիօրէն խորհրդակցութիւններ ունեցան Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովին հետ եւ յետ ուսումնասիրութեան եւ քննութեան Հայ եկեղեցւոյ համար վարչակազմակերպական կանոնագրութեան մը մշակումին հետ կապուած ալլապան հարցերուն, Ձեզի պիտի ներկայացնեն մեր Ս. Աթոռի հայեցակէտը այդ առնչութեամբ:

Ինչպէս Ձերոյ Սրբութեան, նաեւ Մեր գլխաւորագոյն նախանձախնդրութիւնն է ամրացնել Հայց. եկեղեցւոյ միութիւնը, եւ ստեղծել համերաշխ գործակցութեան այնպիսի պայմաններ, որոնք մեզ բոլորս առաջնորդեն Հայ եկեղեցւոյ եւ Հայ ազգի հոգեւոր եւ ազգային ընդհանրական շահերու ձեռքբերման:

Մեր եկեղեցին, թէ՛ Մայր Հայաստանի մէջ եւ թէ՛ Սփիւռքի չորս տարածքին վրայ արդի աշխարհի ստեղծած կեանքի պայմաններու շրջագծին մէջ, հրամայական կարիքը ունի վերանորոգելու իր կրօնական առաքելութիւնը, որպէսզի կարենայ գոհացում տալ մեր ժողովուրդի կեանքի հոգեւոր կարիքներուն: Ազգային տեսակետէն՝ հայութեան համայնական շահը կը պահանջէ, որ Հայ ժողովուրդի միասնականութիւնը դառնայ գործնականօրէն ազդու արտայայտութիւնը Հայ ազգի հիմնական ըղձախնքներուն, երապներուն եւ հեռանկարներուն:

Ահա թէ ինչ բարձր հրամայականներու տակ եւ ինչ հարկեցուցիչ պայմաններու յոյսին ներքեւ հարկ է որ նկատի առնուին Հայ եկեղեցւոյ միութեան եւ երկու Կաթողիկոսական Աթոռներու ներդաշնակ գործակցութեան հարցերը եւ ըստ այնմ գտնուին պատշաճագոյն եւ օգտակարագոյն ձեւերը այդ միութեան եւ գործակցութեան զարգացման եւ պտղաբերման համար:

Վստահ ենք, որ մեր Պատուիրակութեան խօսակցութիւնները Ձերոյ Ս. Օծութեան հետ կ'ունենան իրենց բարի պտուղները եւ իրենց այս այցելութիւնը կը դառնայ նոր քայլ մը երկու Կաթողիկոսական Աթոռներու գործակցութեան մթնոլորտին զարգացման եւ ուղիին յառաջացման մէջ: Երկու տարի առաջ Փարիզի Մեր հանդիպումէն ետքը Մենք զգացինք—եւ կը շարունակենք այդ զգացումը անայլալ պահել,—որ փոխադարձ եղբայրական յարաբե-

րութիւնը թէ՛ Մեր՝ Կաթողիկոսներու միջեւ եւ թէ՛ մեր Կաթողիկոսութեանց միջեւ դրական իրագործումներու նոր էջ մը կը բանայ մեր եկեղեցւոյ արդի կեանքին մէջ:

Այս նոյն զգացումով կը նայինք նաեւ մեր Պատուիրակութեան Ս. Էջմիածնի մէջ ունենալիք խօսակցութեանց, միջոտ պատրաստ եւ նախանձախնդիր ըլլալով որ յառաջիկայ տարիներուն գործնապէս պիտի քաղենք բարի պտուղները ստեղծարար եւ խաղաղաշէն այդ գործակցութեան:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձերդ Եղբայրութեան պարգեւէ քաջամոռջ եւ երկար կեանք, որպէսզի Ձեր գահակալութեան ջրջանին առաւել եւս ամրանայ Հայ եկեղեցւոյ միութիւնը եւ ծաղկուն արդիւնաւորութեամբ պտղաբերի Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը՝ ի վայելումն ամբողջ Հայ ժողովուրդին՝ ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Մնամք եղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ:

ԱՂԹԱՎԻՅ

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

